

**THE PROBLEM OF STUDYING TERMINOLOGICAL VOCABULARY IN
HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS**

Miqayelyan Karine

Ph.D., Associate Professor

Yerevan State University, Armenia

miqayelyankarine@ysu.am

Summary

This article is devoted to the substantiation of the need to teach terminal vocabulary and the development of its methodology in higher educational institutions.

The goal of the article is that in the system of higher education, attaching importance to the problems of teaching professional terminology, to develop a methodology for their effective teaching, which will improve the process of mastering terminal vocabulary by students in this specialty. The article attempts to present these problems and indicate ways to effectively provide professional vocabulary in the learning process.

Being the fastest growing and changing part of the vocabulary of any language, the problem of teaching scientific words in the system of higher professional education is important and relevant. The scientific novelty of the article proposed by us on the specialization of the ways of the emergence of terminal vocabulary, etymology, spelling is the identification of the problem of consistent and purposeful teaching of spelling, specifics and means of term formation, semantic fields and the indication of effective ways of learning.

Keywords: Terminal layer of words, university education, term-forming prefixes, suffixes, terminal elements

ПРОБЛЕМА ИЗУЧЕНИЯ ТЕРМИНОЛОГИЧЕСКОГО СЛОВАРНОГО ЗАПАСА В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

Микаелян Карине

Канд. фил.наук, доцент

Ереванский государственный университет, Армения

karinemikayelyan63@gmail.com

Аннотация

Данная статья посвящена обоснованию необходимости обучения терминологической лексике и разработке ее методики в высших учебных заведениях.

Цель статьи состоит в том, чтобы рассмотреть необходимость разработки методики эффективного обучения студентов профессиональной терминологии, придавая важность данной проблеме в системе вузовского образования. В статье была предпринята попытка рассмотреть эти проблемы и указать пути эффективной презентации профессиональной лексики в процессе обучения.

Проблема преподавания научных слов, как самой быстрорастущей и изменяющейся части лексики любого языка, в системе вузовского профессионального образования важна и актуальна.

Научная новизна статьи. Нами предложены способы выявления проблемы последовательного и целенаправленного обучения профессиональной лексики путем изучения ее орфографии, этимологии, специфики и средств терминообразования, семантических полей, а также указаны эффективные методы обучения.

Ключевые слова: терминологическая лексика, вузовское обучение, терминообразующие префиксы, суффиксы, терминальные элементы.

**ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻ ԾՈՒՐՁ**

Միքայելյան Կարինե

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան, Հայաստան

miqayelyankarine@ysu.am

Սույն հոդվածը նվիրված է տերմինային բառապաշարի բուհական ուսուցման անհրաժեշտությունը հիմնավորելուն ու մեթոդաբանության մշակմանը: Նպատակն է բուհական կրթության համակարգում, կարևորելով մասնագիտական տերմինաբանության ուսուցման խնդիրները, մշակել դրանց արդյունավետ

մատուցման մեթոդիկա, ինչը կբարելավի տվյալ մասնագիտությամբ ուսանողների կողմից տերմինահամակարգի յուրացման գործընթացը: Հողվածում փորձ է կատարվել ներկայացնելու այդ հիմնախնդիրները և մատնանշելու ուսուցման գործընթացում մասնագիտական բառապաշարի արդյունավետ մատուցման ուղիները:

Լինելով ցանկացած լեզվի բառապաշարի ամենաարագ զարգացող և փոփոխվող մասը՝ բուհական մասնագիտական կրթության համակարգում գիտաբառերի դասավանդման խնդիրը կարևոր է և արդիական: Հողվածի գիտական նորույթը մեր կողմից առաջարկվող ըստ մասնագիտացումների տերմինային բառապաշարի առաջացման ուղիների, ստուգաբանության, ուղղագրության, ուղղախոսության, տերմինակերտման առանձնահատկությունների, տերմինակազմության միջոցների, եղանակների, իմաստային դաշտերի հետևողական ու նպատակային դասավանդման խնդրի վերհանումն է և դասավանդման արդյունավետ ուղիների մատնանշումը:

Բանալի բառեր: Համալսարանական կրթություն, տերմինների ձևավորում, նախաձանցներ, վերջաձանցներ:

Համառոտ ներածական

Ժամանակակից գիտության զարգացմանը համընթաց փոփոխվում, համալրվում է նաև տերմինային բառաշերտը: Ցանկացած լեզվի բառապաշարում այն ամենաարագ համալրվող շերտն է, ուստի ենթադրում է ուսումնասիրման ու տերմինային բառապաշարի բուհական դասավանդման մեթոդիկայի հրատապ մշակման խնդիրներ, որոնց համար անհրաժեշտ է մատնանշել լուծման ուղիներ:

Գիտությունը համամարդկային արժեք է, իսկ ընդհանուր շփումը ու հասկանալիությունը ենթադրում են նախևառաջ փոխառյալ և դրանց համարժեք հայերեն տերմինակերտ նախաձանցների, վերջաձանցների, տերմինատարրերի զուգահեռ գոյությունը մայրենի լեզվում: Ուստի մասնավորապես տերմինային փոխառությունները մշտապես համալրում են հայերենի բառապաշարի գործուն կամ ոչ գործուն բառաշերտերը: Մինչդեռ դրանց համակողմանի ուսումնասիրման, տերմինային բառապաշարի բուհական ուսուցման առանձնահատկությունների ու մեթոդաբանության խնդիրները լայն առումով մնում են չլուծված, ուստի արդիական են:

Սույն հետազոտության **նպատակն** է բարձրագույն կրթության համակարգում, կարևորելով մասնագիտական տերմինաբանության ուսուցման խնդիրները, մշակել դրանց արդյունավետ մատուցման մեթոդիկա, ինչը կբարելավի տվյալ մասնագիտությամբ տերմինահամակարգի՝ ուսանողների կողմից յուրացման գործընթացը: Հողվածում փորձ է կատարվել ներկայացնելու այդ հիմնախնդիրները և մատնանշելու ուսուցման գործընթացում մասնագիտական բառապաշարի արդյունավետ մատուցման ուղիները:

Հիմնական նյութի շարադրանքը

Թեև հայերենի տերմինաբանության տեսական և կիրառական խնդիրները եղել և մնում են հայ լեզվաբանների, տերմինաբանների ուշադրության կենտրոնում¹, սակայն ներկայումս էլ մասնավորապես տերմինային բառապաշարի բուհական ուսուցման խնդիրները չեն կորցնում իրենց արդիականությունը, քանի որ գիտության նոր և նորագույն նվաճումների աճի համատեքստում հայերենի տերմինաբանությունը մշտապես էականորեն ենթարկվում է արտալեզվական գործոնների ազդեցությանը: Առանձին տերմինային համակարգի զարգացման ընդհանուր օրինաչափությունների տեսական հարցերի ուսուցումից մինչև ոլորտային բառապաշարի միօրինականացման, բառարանակազմության, հատկապես իբրև բառապաշարի առանձնահատուկ շերտի բուհական ուսուցման համակարգում դասավանդման խնդիրները դեռևս լուծված չեն:

Տերմինաբանության բուհական ուսուցման առանձնահատկություններին ու մեթոդաբանությանը հիմնավոր անդրադարձ մեզանում վերջին տասնամյակում է միայն կատարվում, իսկ ռուս

¹ Տե՛ս **Իշխանյան Ռ. Ա.**, Հայերենի տերմինաշինության հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», N7, Երևան, 1969, **Աղայան Է.**, Տերմինաշինության մի քանի խնդիրների շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», N1, Երևան, 1971, **Ալախյան Մ. Ա.**, Փոխառությունները տերմինակազմության աղբյուր, «Լրաբեր հասարակական գիտությունների», N2, Երևան, 1971, **Ղազանյան Լ. Հ.**, Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն. Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1977, **Պետրոսյան Հ. Ց.**, Տերմինագիտության հիմունքներ, Երևան, 2010, **Միրունյան Տ.**, Ածանցումը որպես լեզվաբանական տերմինների կազմության միջոց, Երևան, 2010, **Շալունց Ռ. Ն.**, Տերմինային համանշտություն և բազմիմաստություն. Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1984, **Գալստյան Ա.**, Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Չանգակ», 2012, էջ 34-47:

տերմինագիտության դասագրքեր կամ ուսումնական ձեռնարկներ գրվել են անցյալ դարի յոթանասունական թվականներից:

Հայ տերմինաբաններից Հ. Յ. Պետրոսյանն իրավացիորեն փաստում է, որ համաշխարհայնացման արդի դարաշրջանում, երբ «...լեզուները «բաց» են տերմինների հոսքի առջև, տերմինաբանությունը դառնում է լեզուների բառապաշարի գործուն մասնաշերտերից մեկը՝ անկախ նրանից՝ տվյալ լեզուն կրող հանրությունը գիտատեխնիկական առաջընթացի մեջ ներդրում ունի՞, թե՞ ոչ: Լեզուների բառապաշարի զարգացումն այսուհետև ընթանում է հիմնականում տերմինաբանության ուղղությամբ» [4, էջ 13]: Լեզվաբանական տերմինների կառուցվածքային ու իմաստագործառական որոշ հարցերի է անդրադարձել լեզվաբան Ա. Գալստյանը՝ նշելով. «... Լեզվաբանական տերմինների համակարգային ուսումնասիրությունը, անշուշտ, կնպաստի գործառվող տերմինների բովանդակային ընդգրկման սահմանումների ճշգրտմանը, լեզվաբանական ավանդույթի դրական կողմերի պահպանմամբ հանդերձ՝ անհրաժեշտ դեպքերում տերմինների գործածության որոշակի կանոնարկմանը, նոր տերմինների օրինաչափությունների վերհանմանը, հանիրավի մոռացության մատնված տերմինների՝ ըստ անհրաժեշտության օգտագործմանը» [2, էջ 80]: Նույնիսկ լեզվաբանական, բառակազմագիտական խնդիրների քննությանը հայ լեզվաբանության մեջ 20-րդ դարի կեսերից սկսած են անդրադարձել, հետևաբար «ուշադրություն է դարձվել նաև բառակազմագիտական տերմինաբանության հարցերին, թեև միշտ չէ, որ հետազոտողները բացահայտորեն անդրադարձել են այս կամ այն տերմինի սահմանմանը կամ իմաստի ճշգրտմանը» [3, էջ 102]: Ուստի եթե նույնիսկ լեզվաբանական տերմինների տեսական հետազոտությունները դեռևս խնդրահարույց են, ապա առավել անկատար ու անորոշ են մասնագիտական այլ տերմինահամակարգերի համապարփակ ուսումնասիրման և ըստ մասնագիտացումների դրանց դասավանդման խնդիրները:

Այսպիսով՝ տերմինաբանական տեսական խնդիրների ուսումնասիրմանը զուգահեռ՝ կարևոր խնդիր է նաև բուհական ուսուցման գործընթացում դրանց դասավանդումը: Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր բառ իր ծագման ժամանակ տերմին էր, բայց լեզվի զարգացման ընթացքում կամ պահպանել է իր տերմինաբանական կարգավիճակը, կամ ենթարկվել է ապատերմինացման գործընթացի: Մյուս կողմից լեզվի բառապաշարի մի շերտ էլ կարող է տերմինացվել «բառիմաստի փոփոխության զանազան եղանակներով՝ բառիմաստի նեղացման, ընդլայնման, ըստ գործառնության, զուգորդության կամ ըստ փոխաբերության իմաստափոխության շնորհիվ» [5, էջ 80]: Տերմինային բառապաշարն անընդհատ փոփոխվում և իր արտացոլումն է գտնում նեղ մասնագիտական բառարաններում, բուհական դասագրքերում, մենագրություններում, գիտական հոդվածներում, որոնք ուսուցման նյութի լավագույն աղբյուր կարող են հանդիսանալ:

Անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի և այլ տարածված լեզուների պարագայում ևս մեծ խնդիր է ազգային լեզվով տերմինային համարժեքների ստեղծումը: Հատկապես փոքրաթիվ լեզվակիրների պարագայում տերմինակերտման հարցում էապես կարևորվում է ազգային լեզվով համարժեքների ստեղծման խնդիրը: Տերմինների հայերեն համարժեքների ստեղծմանը մեծապես նպաստել են՝

- հունալատինական նախածանցների ու վերջածանցների հայերեն համարժեքներով փոխարինումը, ինչպես՝ **ad-um-** (assimilatio – ասիմիլյացիա – առնմանում), **dis - դի** (difficilis – դժվար), **in - սն** (immobilis – անշարժ), **προ-, pre-, ante- նախ (ա)** (antebrachium – նախաբազուկ), **circum-շուրջ** (circumflexus – շրջադարձ), **αντι-anti-, contra- հակ (ա)** (contraindicatio – հակացուցում), **εχ-(ε’ξ) se-, ex-, extra- արտ (ա)** (sekretio – արտազատում, expiratio – արտաբջջային), **ε’ν - in – ներ** (injectio -ինյեկցիա – ներարկում), **δπο’-infra – ենթ (ա)** (infraspinalis – ենթամաշկային), **inter – միջ** (intervertebralis – միջողնային), **prae - նախ (ա)** (praecardium – նախասրտային), **post – հետ** (postoperativus – հետվիրաբուժական), **re, α’va - ana – վեր (ա)** (reanimatio –վերակենդանացում, *anamnesis* – վերհուշ), **μετα - trans - փոխ** (*transplantatio* – փոխպատվաստում), **δπερ- hyper-** գեր-(hypersensitive – գերզգայուն), **επι - supra-** մակ-, վեր- (supraventricular – վերփորոքային), **παρο- para-** մերձ-, հար- (հարականջային), **-իզմ:**

-ություն (ակոնոլիզմ – գինեմոլություն, հարբեցողություն, ասպերմատիզմ–անսերմություն), **-իս – ություն** (ախիրիս – անթնություն, ախուլիս – անմաղձություն, ախրոմիս – անգունություն, ակամսիս – անծալություն, անօֆթալմիս – անակնություն, ապատիս – անտարբերություն, անզգայնություն) և այլն,

- տերմինատարբերի հայերեն համարժեքների ստեղծումը, ինչպես

ոմա – ուռ (ուցք) - (ադենոմա – գեղձուռուցք, ադենոկիստոմա- գեղձաբջջատուռուցք, ադիպոմա – ճարպուռուցք, անգիոմա – անոթուռուցք, անգիոֆիբրոմա – անոթաթելքուռուցք, էկզոդրոմա –

աճառուուցք, ոսկրուուցք), **մանիա - մուրություն** (դիպսոմանիա - խմելամուրություն, դրոմոմանիա - թափառամուրություն, էրոտոմանիա - սեռամուրություն և այլն), **սկոպ - դիտակ** (էնտերոսկոպ - աղեղիտակ, աերոցիստոսկոպ - օդափամփշտաղիտակ) **սկոպիա - դիտում** (ակտինոսկոպիա - ճառագայթադիտում, ամնիոսկոպիա - ջրաթաղանթադիտում, անտրոսկոպիա - խոռոչադիտում), **ֆոբ - վախ** (ագորաֆոբիա - տարածավախություն, աերոֆոբիա օդավախություն, սկրոֆոբիա - բարձրավախություն, անտրոպոֆոբիա - մարդավախություն, թանաֆոբիա - մահավախություն), **ալգիա - ցավ** (անգիալգիա - անոթացավ, թերմալգիա - ջերմացավ), **դերմ - մաշկ** (էկզոդերմ - վերնամաշկ), **սպերմ, սպոր - սերմ** (ասթենոսպերմիա - թուլասերմություն), **սպազմ - կծկ (-անք, -ում)** (անգիոսպազմ - անոթակծկանք, էնտերոսպազմ - աղեկծկում), **գեն-ծին** (անգիոգեն - անոթածին, աուտոգեն - ինքնածին, աուտոգենեզ - ինքնածնություն, դիսգենեզիա - դժվարածնություն, թրոմբոգեն - մակարդուկածին), **ֆագ - կեր** (էլվրիֆագիա - ամենակերություն, ավտոֆագիա - ինքնակերություն), **ֆիլ - սեր** (անտրոպոֆիլիա - մարդասիրություն), **տոքսին - թույն** (ապիտոքսին - մեղվաթույն, ասկարիդոտոքսին - ճճվաթույն), **լիտ - քար** (էնտերոլիտ - աղեքար), **տոմ - հաստ** (ադենոտոմ - գեղձահաստ), **տոմիա - հաստում** (ադենոտոմիա - գեղձահաստում, անգիոտոմիա - անոթահաստում, արթրոտոմիա - հոդահաստում, թիրեոիդոտոմիա - վահանագեղձահաստում, թորակոտոմիա - կրծքավանդակահաստում), **էկտոմիա - հեռացում** (թիրեոիդէկտոմիա - վահանագեղձահեռացում), **էկտագիա - լայնանք** (անգիէկտագիա - անոթալայնանք), **ուրիա - մեզ** (դիզուրիա - միզախանգարում, դժվարամիզություն, դիուրեզ - օրամեզ, միզարտադրություն, ալբումինուրիա - սպիտակամիզություն, ախրոմատուրիա - անգունամիզություն), **դի - երկ** (դիխրոմագիա - երկգունատեսություն, դիկարիոն - երկկորիզ, դիպլոիդ - երկքրոմոսոմակիր, դիպլոպիա - երկտեսություն, երկատեսություն, դիպլոֆոնիա - երկձայնություն), **գրամա - գիր** (էլէկտրացեֆալոգրամա - էլէկտրաուղեղագիր, էլէկտրակարդիոգրամա - էլէկտրասրտագիր), **գրաֆիա - գրություն** (էլէկտրակարդիոգրաֆիա - էլէկտրասրտագրություն), **ցեֆալ - գլուխ, ուղեղ** (դոլիխցեֆալ - երկարագլուխ, սկրոցեֆալիա - սրագլխություն, էնցեֆալիտ - ուղեղաբորբ), **մալացիա - կակղանք** (էնցեֆալոմալացիա- ուղեղակակղանք), **լոզ - բան, գետ** (անգիոլոզ - անոթաբան, անտրոպոլոզ - մարդաբան, արթրոլոզ - հոդաբան, դիետոլոզ - սննդագետ, սննդաբան, էմբրիոլոզ - սաղմնաբան, էնդոկրինոլոզ - ներզատաբան, էպիդեմիոլոզ - համաճարակաբան), **մետր - չափ** (ալգեզիոմետր - զգայաչափ, ցավաչափ, ակտինոմետր - ճառագայթաչափ, շողաչափ, ակումետր - լսաչափ, դինամոմետր - ուժաչափ, էվդիոմետր - զագաչափ), **լիզիս - լուծում** (էրիթրոցիտոլիզ - արյունալուծում), **հեմո - արյուն** (անտիհեմոլիզ - հակաարյունալուծում), **թերապիա - բուժում** (աուտոհեմոթերապիա - ինքնաարյունաբուժում, ակտինոթերապիա - ճառագայթաբուժում, թերմոթերապիա - ջերմաբուժում) և այլն [1, 52-106]:

Ըստ մասնագիտացումների նման բառակազմական աշխատանքները կարող են մեծապես նպաստել մասնագիտական տերմինային բառապաշարի, տերմինակերտման սկզբունքների յուրացմանը՝ զարգացնելով տերմինաճանաչման ու տերմինաշինարարական հմտություններ:

Ըստ մասնագիտական տերմինահամակարգերի՝ տերմինների առաջացման ուղիների՝ բառակազմական միջոցների, բառիմաստի փոփոխության, տերմինային փոխառությունների ուսուցումը մեծապես կարող է նպաստել հայերենի բառապաշարի զարգացման առանձնահատկությունների, մասնավորապես բառապաշարի ներլեզվական ու արտալեզվական զարգացման ուղիների յուրացմանը, գիտական խոսքի կառուցմանը:

Այսպիսով ըստ մասնագիտացումների տերմինակերտ բառակազմական միջոցների ուսուցումը կնպաստի մասնագիտական բառապաշարի արդյունավետ դասավանդմանը, տերմինակերտման սկզբունքների մատուցմանը, տերմինաշինական աշխատանքների կատարմանը:

Պետք է փաստել, որ գիտաբառերի զգալի մասը փոխառություններ են: Դրանք պարզապես տառադարձվել կամ հնչադարձվել են: Պատմականորեն ամրագրված են տերմինահամակարգերում, ուստի ավանդույթի ուժով արդեն փոխառություններ էլ կմնան, օրինակ՝ ռեկտոր, ռեկտորատ, դեկան, դեկանատ, բակալավր, մագիստրոս, ասպիրանտ, ասպիրանտուրա, երբեմն էլ կիսապատճենումներ են, օրինակ՝ փոխդեկան, մագիստրոսական և այլն:

Փոխառյալ տերմինների հայերեն համարժեքներից շատերն արդեն ամրագրվել են մեր լեզվում, և դրանք չիմանալն ու չկիրառելը անփութության, լեզվին բավարար չափով չտիրապետելու, տարվող ոչ ճիշտ լեզվաքաղաքականության հետևանք են: Ուստի տերմինների ուսուցման գործընթացում կարևորվում է դրանց իբրև նույնանուններ համատեղ ուսուցումը՝ տարբերակելով օտարաբանությունները: Այսպես՝ դիվերտիկուլ - ծոցակ, ինյեկցիա ըստ մասնագիտացումների ներարկում, կրիզիս - ճգնաժամ, կապսուլա - պատիճ, մետաբոլիզմ - նյութափոխություն, միալգիա - մկանացավ, ռեցեպտ - դեղատոմս, սուդոն -

գիշերանոթ, վակցինա – պատվաստանյութ, վենա – երակ, տիֆլիտ – կույրադիքաբորբ, տոքսին – թույն, տրանսպլանտացիա – փոխպատվաստում, տրավմա – վնասվածք, տրավմատոլոգ – վնասվածքաբան, տոքսիկոլոգ – թունախոս, տոքսիկոմանիա – թունամոլություն, օպերացիա – վիրահատություն, ցիտոլոգիա – բջջաբանություն և այլն:

Փոխառյալ տերմինների մի մասն էլ երբեմն կիրառվում է հայերեն համարժեքներին զուգահեռ, ընդ որում՝ արձանագրվում է մայրենի լեզվով տարբերակների գերակայության միտում: Այս առումով ճիշտ լեզվաքաղաքականությունը, բուհական համակարգում ուսուցման ոլորտում դրանց յուրացումը լեզվի զարգացման գործընթացում կհանգեցնեն հայերեն համարժեքների տարածմանը, տերմինային օտարաբանություններից խուսափելուն: Այսպես՝ աբսցես – թարախակույտ, արթրիտ – հոդաբորբ, ամպուլա – սրվակ, անոմալիա – շեղում, անկանոնություն, անգիոլոգիա – անոթաբանություն, անեմիա – սակավարյունություն, անթրոպոլոգիա – մարդաբանություն, ավելոլա – բշտիկ, ասֆիքսիա – շնչահեղձություն, ասենդիքս – որդանման ելուն, անաստոմոլոգ – բերանակցում, բիոսֆերա – կենսոլորտ, գաստրիտ – ստամոքսաբորբ, գաստրոսկոպիա – ստամոքսազննում և այլն:

Գործնական հետազոտությունները փաստում են, որ այն ուսանողները, որոնք լավ են տիրապետում մասնագիտական տերմինային բառապաշարին, շատ ավելի հեշտ են ընկալում օտարալեզու մասնագիտական տեքստերը, քան նրանք, ովքեր համապատասխան հմտություններ չունեն:

Տերմինային բառապաշարի զարգացմանը մեծապես նպաստում են ըստ գիտաճյուղերի բացատրական, ստուգաբանական, թարգմանական բառարանների կազմումը, մենագրություններում, դասագրքերում, հոդվածներում տերմինների հայերեն համարժեքների կիրառության ընդլայնումը:

Կարևորում ենք նաև տերմինների ուղղագրության, ուղղախոսության, ստուգաբանության, ըստ տերմինների իմաստաբանության՝ տերմինաբանական դաշտերի ուսուցումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Հ. Թ. և ուրիշներ, Լատիներեն լեզու և բժշկական տերմինաբանություն, Երևան, 2008:
2. Գալստյան Ա., Լեզվաբանական տերմինների ուսումնասիրության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2011:
3. Հովսեփյան Լ., Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, Ջահուկյանական ընթերցումներ-2009, Երևան, 2009:
4. Պետրոսյան Հ. Ց., Տերմինագիտության հիմունքներ, դասագիրք, Երևան, 2010:
5. Սուրբիսյան Ա. Մ. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2017:

Получено: 18.10.2022

Received 18.10.2022

Рассмотрено: 26.10.2022

Reviewed 26.10.2022

Принято: 31.10.2022

Accepted 31.10.2022

Journal "Education in the 21st Century", Vol1-8/2/, 2022



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License